

Ամիս մը ժամանակ հազիւ կրցով խոսքով արգելով Գուրգէն Ակեոյ գաւառը, որ կատարեալ առողջանայ եւ հինքն գա: Ամէն ջանք անօգուտ եղաւ, վասնզի լսելով թէ ի՞նչ անիշխանութիւն կը տիրէր Բաղդատ, չի կրցաւ համբերել եւ գնաց Վասպուրական, մտաւ իւր հայրենի գաւառը Մարդաստան քանի մը հաւատարիմներով:

Ժողովուրդը երբ իմացաւ Գուրգէնի դարձը՝ խուռն բազմութեամբ գինք դիմաւորեց ուրախութեան եւ գոհութեան ցոյցերով, վասնզի Գրիգոր Դերենիկ Աշտոյ երիտասարդ անդրանիկը, որ հօրը փոխանակ կը վարէր Վասպուրական երկիրը, մինչդեռ նա Բաղդատ էր, շատերու ատելի էր անձնահաճ գոռոզութեանն համար: Գուրգէնի գալուստը բոլոր փոքրիկ բռնաւորները զարհուրեցուց, որ կը տիրէին բերդերու եւ քաղաքաց. շուտ մը ժողովուրդեցան Դերենիկի շուրջը եկան Գուրգէնի վրայ, որ իւր սակաւաթիւ զօրօք յարձակեցաւ, ցրուեց զամենքը եւ դարձուց կորակոր ի փախուստ, թեպէտ աջ արմունկէն վիրաւորուեցաւ. յայտնի էր թէ ժամանակի կարօտ էր բժշկութեան:

Դերենիկ եւ իւրայինք իմանալով այս վիճակը՝ դարձեայ յարձակեցան բազմութեամբ Գուրգէնի վրայ, որ վիրաւոր՝ ոչ կատարեալ կազդուրեալ հիւանդութենէ եւ բանտի նեղութեանց ու տառապանաց՝ բռնուեցաւ իւր թշնամիներէն, որ տարին զէնք եւ բանտեցին շղթայակապ Զադամակերտ քաղքին՝ իւր հայրենի պալատին մէջ:

Հոն երբ գիշեր մը նստած (էր տխուր եւ վիրաւոր, յանկարծ բանտին դուռը բացուեցաւ, եւ Դերենիկին ծառայներէն մէկը մտաւ ներս՝ քակեց Գուրգէնի շղթաները եւ զէնքերն առջեւը դնելով՝ «Դա միայն կրնաս իմ վրէժս այս յիմար եւ գոռոզ երիտասարդէն խնդրել, քայլէք եկ ինձ հետ եւ մէկ հարուածով տէր եղիր ո՛չ Մարդաստանի միայն, այլ բոլոր Վասպուրականի»,— ըսաւ: Մերկ սուրն ի ձեռին, մտաւ Գուրգէն Դերենիկի սենեակը, եւ մեծ ու տխուր ձայնով՝

— Որդեա՛կ իմ Դերենիկ, ողջոյն քեզ, ողջոյն քեզ, գոչեց: